# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՏՈՍԲԵՑԻ (ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ)

(1300? — 1363?)

---

*Կարապետ Վարդապետ ծնած է Վասպուրականի Տոսբ գաւառը, ԺԴ. դարու սկիզբը։ Հայրը քահանայ էր Թովմա անունով։ Տղայ հասակին սէր ըզգացած է բանի սպասաւորութեան, եւ գացած է Արճիշեցի Յովհաննէս Վարդապետի մօտ եւ երեք տարի աշակերտելով ձեռնադրուած է քահանայ։*

*Ապա գացած է Գլաձոր, Հռչակաւոր Եսայի Վարդապետի մօտ, եւ հոն ութ տարի մնալէ ետք առած է վարդապետութեան աստիճան՝ երբ երեսուն տարեկան էր։*

*Յետոյ եկած է Երուսաղէմ ուխտի տնօրինական սրբավայրերուն, եւ տեսնելով Ս. Փրկիչ եկեղեցիին աւերեալ եւ լքեալ վիճակը, գնած է զայն պէթմալէն (արքունիքէն) չորս հազար դրամի։ Չորս անգամ Եգիպտոս իջած է եւ Թագաւորէն արտօնագիր ձեռք բերած Ս. Փրկչի վանքը վերաշինելու, ինչպէս նաեւ սուրբ վայրերու մէջ համարձակ շրջելու համար։ Երկու անգամ ալ Կիլիկիա գացած է մեծ նեղութիւններ կրելով ծովի եւ ցամաքի վրայ, ցամաքային ճամբորդութիւնները հետիոտն կատարելով։ Երուսաղէմի մէջ կրած է անպատմելի վիշտեր։*

*Իր մայրն ալ ուխտի եկած է Երուսաղէմ, եւ վերադարձին վախճանած է Կիլիկիոյ մէջ։*

*Գեթսեմանիի ձորին մէջ գտնուող Ս. Աստուածածնի եկեղեցին հեղեղներու բերած հողերով լեցուած է եղեր երկար ժամանակէ ի վեր, Կարապետ Վարդապետ զայն ալ մաքրած է օրական տաս գործաւոր աշխատցնելով։*

*Կարապետ Վրդ. Երուսաղէմացի վախճանած է 1363ին մօտերը։*

*Կարապետ Վրդ. եղած է ոչ միայն գործունեայ եւ շինարար մարդ մը, այլ նաեւ գրասէր անձ մը։ Ան ստացած է շարք մը ձեռագիրներ, զոր ետքը նուիրած է Ս. Փրկչին։ Ասոնց մէջ գտնուած իր յիշատակարաններէն բնորոշ շարք մը ահաւասիկ՝ իբրեւ վկայութիւն։*

1. *Աստուածաշունչ (մասնակի). — Ձեռ. Ս. Յակոբեանց, թ.* 540։

*Ա. — Թղ.* 36*բ. — Ես նուաստս, Կպ. Վրդ. տվի գիր գրելոյս, որ է Նոր Կտակարանքս, Առակքն եւ Յեսուն, Սր. Փրկչին, որ է տեղիք չարչարանաց Քի. Այ. յաւուրն մերո, եւ կա տեղան աստուածամերձ վէմն, որ զՅիսուս ի վերա ձգեցին. յիշատակ ինձ եւ իմոցն՝ հաւրն իմո Թովմա քահանի եւ մայրկանն իմո հանգուցելոցն առ Քրիստոս...։*

*Բ. — Թղ.* 168*բ. — Ես նվաստ Կպ. Վրդ. որ եմ ի գաւառէն Տոսբա, մերձ առ սուրբս լերինն Վարագա. եւ ի տղայութեան հասակին սիրեցի զսպասաւորութիւն բանի, գնացի առ Յոհանէս Վարդապետն Արճիշեցի եւ աշակերտեցի նմա երեք ամ եւ առի զաւրհնութիւն կարգի քահանաութեան։*

digitised by A.R.A.R.@

Եւ անտի գնացի ի մենաստանն Գլաձոր առ հռչակաւոր Վարդապետն Յեսայի եւ անդ կացեալ զամս ութ առի զաւրհնութիւն հրամանի վարդապետութեան յերեսաւն ամէն:

Եւ առաջնորդութեամբն Քրիստոսի եկի ի Ս. Քաղաքս յԵրուսաղէմ, երկիր պագանել սուրբ տնաւրինական տեղեացս:

Եւ տեսի զՍր. Փրկիչ եկեղեցիս, որ է տեղիք չարչարանաց Քր. Այ. յուսոյն մերո, էր կոխան լեալ անօրինաց, այլ եւ ձիոց եւ իշուց, քակած եւ ծակած: Եւ ես Նվաստս, կարողութեամբն Յիսուսի, գնեցի ի պէԹմալէն ի չորս հազար դրամ ընդ գինն ու ընդ կաշառքն: Եւ Գ. անգամ Եգիպտոս իջա եւ առի Թուխթ հրամանի յարքայէն Եգիպտոսի շինութեան Վանիցս Սր. Փրկչին: Երկու անգամ յերկիրն Կիլիկեցոց գնացի եւ բազում աշխատանս կրեցի ի ծովու եւ ի ցամաքի, զի հեռաւոր ընթանայի ընդ ցամաքն: Եւ ի յԵրուսաղէմ անպատմելի վշտացս ի յանաւրինաց եւ յաւրինաւորաց այլ եւ ի սուտ եղբարց:

Եկն եւ մայրիկն իմ յերկրպագութիւն սուրբ տնաւրինականացս եւ երկրպագեալ դարձաւ ի գաւառն իւր եւ գնացեալ ի յերկիրն Կիլիկեցոց փոխեցաւ առ Քրիստոս: Քս. Ած. Թողութիւն մեղաց եւ յարութիւն կենաց շնորհէ նմա ամէն:

Եւ որք հանդիպիք այսմ տառի Թողութիւն մեղաց եւ յարութիւն կենաց խնդրեցէք ինձ վշտագնելոյս եւ ծնաւղաց իմոց, հաւրն իմո Թումա քահանայի եւ մայրկան իմո, եւ Ած. զձերն Թողու ամէն:

Մի ոք իշխեսցէ հանել զսուրբ կտակս ի Ս. Փրկչէ եւ որ յանդգնի եւ հանէ՝ մասն եւ բաժին զԿայենին եւ զՅուդային առցէ: Բայց թէ ահ լինի կամ փախուստ՝ պահեն, եւ այլ ի յԵրուսաղէմ դարձուցեն ի յիւր տեղիքն: Խնամով պահօղքն աւրհնին յԱստուծոյ, եւ անխնամքն զպատիժն կրեսցեն:

Տէր Յս. արդար բարի, ողորմեա մեղաւոր քո ծառայի Կպ. Վրդ.ի, եւ արժանացո զիս քո աստուածային տեսլեանդ...:

2. Ժողովածոյ Մեկնութեանց.— Ձեռ. Ս. Յակոբեանց, Թ. 347:

Ա.— Թղ. 1ա.— Ես Կարապետ Վարդապետս տւի զիմ գրկունքս Սր. Փրկչիս, որ է ի Սր. Քաղաքն Երուսաղէմ. Սր. Փրկչիս տեղիք չարչարանաց Քր. Այ. յուսոյն մերոյ...:

Բ.— Թղ. 138բ.— Փրկիչ իմ Յիսուս, ողորմեա Կպ. Վրդ.ին եւ ազատեա ի հրոյն յաւիտենից:

Գ.— Թղ. 197ա.— Սր. Աստուածածին, քեզ յանձնեմ եմ Կպ. Վրդ. հոգոյս ի յայն յահեղ աւուրն:

3. Մատենագրութիւնք Գր. Նիւսացւոյ.— Ձեռ. Ս. Յակոբեանց, Թ. 394:

Ա.— Էջ 1.— Տէր Յս. ողորմեա Կպ. Վրդ.ին ամէն:

Բ.— Էջ 226.— Քս. Ած. ճշմարիտ, ի յայնմ ժամանակին յորժամ առնես դատաստան, ողորմեա Կպ. Վրդ.ին ամէն:

4. Մեկնութիւն Ղուկասու՝ Իգնատիոս Վարդապետի.— Ձեռ. Ս. Յակոբեանց, Թ. 352:

Ա.— Էջ 4.— Ես Նուաստ Կարապետ Վարդապետս, որ գնեցի զՍր. Փրկիչ եկեղեցին, որ է ի Սր. Քաղաքս յԵրուսաղէմ, եւ է Սր. Փրկիչն տեղիք չարչարանաց Քր. Այ. յուսոյն մերոյ, որ է սեղան վէմն որ զՔս. ի վերայ ձագեցին, եւ շինեցի վանք ըստ կարի իմում: Չորս անգամ յԵգիպտոս իջի եւ առի Թուխթ հրամանի ի յարքայէն Եգիպտոսի համարձակ շրջել ի տեղիս տնաւրինականաց Քր. Այ. մերոյ: Բազում վշտացայ ի հաւատացելոց եւ յանհաւա—

digitised by A.R.A.R.@

տից : Յոյս ունիմ ի Սր. Աստուածածին, որ փոխարէն սա գիր տեան եւ գիր Միածնին, ու Սր. Աստուածածինն լինի ինձ հոգեբարձ, զի ես մարմնական տէր չունիմ :

Տվի զիմ գրկուքս Սր. Փրկչին, որ է Ղուկասու Մեծնիչն. մի՛ ոք իշխեսցէ հանել ի Սր. Փրկչէն. կարդասցեն եւ այլ ի Վանքն դարձուսցեն : Անամով պահողքն աւրհնին յԱստուծոյ, եւ անխնամքն պատժին : Տէր Ած. Յս. Քս. ողորմեա մեղուցեալ քո ծառայիդ Կարապետ Վարդապետիս, եւ արժանաւորեա քո աստուածային տեսլեանդ, եւ քո անարատ ծնողիդ տեսլեանդ, զի այլ փափաք չունիմ քան զքո տեսդ եւ քան զքո անարատ ծնողիդ :

Բ.— Էջ 360.— Տէր Յս. ողորմեա Կպ. Վգ.ին Երուսաղէմացս, ամէն :

5. Մարգարէութիւն Եսայեայ, եւ, Կանոն Հիմնարկութեան Եկեղեցւոյ.— Ձեռ. Ս. Յ. Թ. 1818 :

Ա.— Էջ 385.— Տէր Յս. ողորմեա ստացողի սորին Կպ. Վգ.ին, ամէն :

Բ.— Էջ 402.— Տէր Յս. արդար բարի, ողորմեա Կարապետ Վարդապետի Երուսաղէմացս, որ բազում աշխատութեամբ եւ երկամբ զՍր. Փրկիչ եկեղեցին գնեցի ի յանաւրինացն եւ վանք շինեցի բստ կարի իմում, որ է տեղիք չարչարանաց Քի. Այ. յուսոյն մերոյ, եւ կա աստուածամերձ վէմն սեղան պատարագի : Զորս անկամ յԵգիպտոս իջի եւ առի Թուխտ հրամանի յարքայէն Եգիպտոսի, վասն խաղաղութեամբ կելս եւ շրջելս ի տեղիք անաւրինականաց Քի. Այն. մերո : Աւաղ, աւաղ, Թշվառութիւն ի վերա իմ կենացս :

Եւ արդ երկրամերձ դիմօք աղաչեմ զհանդիպողքդ այսմ տառիս, խնդրել ի Սր. յԱստուածածնէն մխիթարութիւն վշտացելոյ հոգս իմս, զի լցուսցէ զփափաք տենչանաց մերոց, զոր խնձր մեր հայցեն ի նմանէ, ոչ բստ իմում արժանաւորութեան, այլ բստ իրում առատ ողորմութեան :

Այլ գիտութիւն [լիցի] զի ի ձորն Յովսափաթու լինելոց է դատաստան միւս անկամ զալրատեանն, բստ Յովելա մարգարէի, որ է Գեսամանի, և անդ է գերեզման Սր. Աստուածածնին, եւ գերեզմանն միայն է ի բաց եւ այլ եկեղեցին հեղեղատով լցեալ ի բազում ժամանակաց : Եւ կային դռներ, որ բստ ըստմկաց զմ[ոխ]ոց կոչէին, բստ կարի իմում սրբեցի եւ զդռներն ծեփեցի բազում աշխատութեամբ, յամէն օր տուան մշակս, Սր. Աստուածածնին սիրոյն համար :

Գ.— Էջ 608.— Տէր Յս. ողորմեա Կպ. Վա.ին ամէն : Ես նուաստս, Կպ. Վգս. տվի զիմ գրկունքս Սր. Փրկչին, որ է յԵրուսաղէմ, ուր կա աստուածամերձ [վէմն, որ է տեղիք չարչար]անաց Քի. Աստուծոյն մերո․․․ :

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@